Սերս

Բնակչության թիվը՝ 208

Սերս գյուղը ՀՀ Վայոց ձորի մարզի բարձր լեռնային և սահմանմերձ բնակավայրերից է։ Սերսն ունի հին ու վաղեմի պատմություն։ Հիմնադրման տարեթիվն անհայտ է։ Հայտնի է , որ գյուղը պատկանելիս է եղել պատմական Հայաստանի Սյունիք նահանգին։ Պահպանվում է գյուղի եկեղեցին, որի հիմնադրման տարեթիվը նույնպես անհայտ է։ Սակայն հայտնի է, որ եկեղեցին վերանորոգվել է 1525 թվականին։ Գյուղի բնակիչները 1604 թվականին գաղթվել են Շահ Աբասի կողմից։ Գյուղը վերաբնակեցվել է 1828 թվականին, պապերը Պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Սաֆրա գյուղից գաղթած հայ ընտանիքներով։

Սերսը, լինելով սահմանամերձ գյուղ, 1988-1994 թվականներին նորից հայտնվել է պատերազմական իրավիճակում՝, սակայն իր բնակիչների վճռականության շնորհիվ դարձել է անխոցելի մի ամրոց։ Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ։

Համայնքն ունի դպրոց, բուժկետ և կենցաղսպասարկման այլ կառույցներ։